


յին գրի ու գրականութեան հիմնադիր ինկեի ածիւնը:

Տասն և հինգ դար շարունակ սրբան արցունք է թափուել այդ սուրբ հողակոյտի վրայ, սրբան սիրտ յուզել, սրբան ծունկ չորել և սրբան շրթունքներ են շփուել այդ ամբողջ հայութեան հետ անքակտելի կերպով կտարած, անմոռանալի շիրիմին: Արչափ տարբեր զգացմունքի արտայայտութիւններ են եղել այդ արցունքները՝ հայելով թէ որ դարում և ինչ ժամանակ են ցօղել դրանք սրբի դամբարանը: Կայ արցունք ուրախութեան և ցնծութեան, կայ և՛ վշտի ու թշւառութեան:

Սբ. Սահակի և Մեսրոպի անուները հինգերորդ դարի սկզբից մինչև մեր օրերը անբաժան մնաց հայ գրականութեանից և դարձեալ անբաժան կը մնայ, մինչև որ վերջին հայն հայկերէն «ախ»-ով կրփչէ իր վերջին շունչը:

Իս. Յարութիւնեան



Վասպուրականի Արիւծը Օշականում:

ՀԱՅՈՑ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԸ ՕՇԱԿԱՆՈՒՄ

Վանդոյժի, Հայդուժի արիւն-արտասուքով թաթախած փայլուն գրչի հեղինակ Հայոց Վեհափառ Հայրիկը ս. Մեսրոպի Օշական այգում մտքով թռել է իր Վասպուրականը:

Վասպուրականի Արծիւը մտորում է վերածնել Մեսրոպի գաբը:

Հայոց հայրենասէր կաթողիկոսի մտորումները

դարաւոր այս կազմին է միայն ըմբռնում. բայց այդ վիթխարի կազմին էլ յանկարծ գետին է տապալում, երկնքին հասնող զագաթը խոնարհում երկրին և կարծէք ծնրաչօք ինքն էլ մեռնում, հէնց այն օրն ու ժամին, երբ անվեհեր Վասպուրականի Արծիւը երկինք է սաւառնում:

Եւ այս առասպել չէ, այլ փաստ ու իրողութիւն:

Եւ զեւ առում են, թէ մեր օրերում հրաշքներ չեն կատարւում:

Բացատրեցէք ընութեան այս գաղանիքը: Բացատրեցէք այս զուգատիպութիւնը:

Իսկ մինչև ընութեան հրաշալիքների ու գաղտնիքների բացատրելը, եկէք իրականացնենք հայրենասէր Հայոց Հայրիկի մը տորումները, եկէք ընկած դարաւոր կազմու տեղը կառուցանենք մի լուսատու փարոս:

S.



ՕՇԱԿԱՆ ԳԻՒՂԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍԱՐԱՆԸ

Աջ ծայրին ս. Մեսրոպի գերեզմանը, որի վրայ կառուցւած է հոյակապ եկեղեցին:

Քիւզն ունի մօտ 300 տուն: